ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

[13:16] 21 Հունիսի, 2006

Մեկ տարուց ավելի է՝ ուժի մեջ է մտել §Հոգեբուժական օգնության մասին¦ ՀՀ օրենքը, բայց այն չի կիրառվել լիարժեքորեն, եւ նոր ենթաօրենսդրական ակտերի անհրաժեշտություն կա: §Հոգեկան առողջության¦ հիմնադրամը, որը կատարել է օրենքի կիրառման վերաբերյալ ուսումնասիրություն, նշում է, որ չկան օրենքի կիրառման արդյունավետ մեխանիզմները, ցածր է ոչ միայն բնակչության, այլ նաեւ ոլորտի մասնագետների իրազեկությունը եւ արդյունավետ չէ պետական ֆինանսավորման ձեւերը:

§Այս օրենքի ընդունումը լուրջ քայլ էր, որը հիմք դրեց հետագա բարեփոխումների: Բայց օրենքի կիրառումը դեռ բավարար չէ, եւ հարկավոր են համատեղ ջանքեր¦,- ասում է հիմնադրամի փորձագետ Սամվել Սուքիասյանը: Հետազոտությունը կատարվել է Հայաստանի 5 հոգեբուժական հաստատություններում: Մասնագետը նշում է, որ այստեղ դեռեւս բարոյահոգեբանական պատշաճ մթնոլորտ չկա, առկա է անձնակազմի անհանդուրժողական վերաբերմունք հիվանդների նկատմամբ եւ հաճախ խախտվում են նրանց իրավունքները:

Սամվել Սուքիասյանը դժգոհում է նաեւ այն փաստից, որ դաշտը մեզ ժառանգություն է մնացել խորհրդային տարիներից եւ ամբողջական վերափոխման կարիք ունի: Հետոզոտությունը փաստում է, որ Հայաստանում նկատվում է հոգեկան հիվանդությունների նվազում: Հատկանշական է, որ հոգեբուժական հիվանդանոցներում այսօր մեծամասնություն են կազմում տղամարդիկ, չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր բնակչության մեջ տղամարդկանց տոկոսային հարաբերությունն ավելի ցածր է: Պրոֆեսոր Սամվել Սուքիասյանը նշում է, որ Հայաստանի բնակչության հոգեկան առողջության վրա լուրջ ազդեցություն են թողել նախկին համակարգի փլուզումը, երկրաշարժը, պատերազմը, շրջափակումը եւ այլ գործոններ:

Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերի տնօրեն Արարատ Վարդանյանը եւս նկատում է, որ իրենց մոտ հիվանդությունների աճ չի նկատվում, ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են մինչեւ 2001թվականը: §Պիկն արդեն անցել է, հիմա սովորական դեմոգրաֆիկ պատկեր է: Հոգեկան հիվանդությունների գերաճի միտում չի նկատվում¦,- ասում է Արարատ Վարդանյանը: Տնօրենի խոսքերով, իրենց ամեմամեծ խնդիրն այսօր մասնագետների հարցն է, որովհետեւ ոչ մեկը չի ուզում հեռավոր շրջանի մասին լսել: Անդրադառնալով ոլորտը կարգավորող վերոհիշյալ օրենքին՝ տնօրենը նկատում է, որ այստեղ շատ են լղոզված սահմանումները եւ այն մի նոր գլխացավանք է առաջացրել իրենց համար:

Ի դեպ, հոգեկան հիվանդությունների խնդիրը արդիական է ողջ աշխարհում: Միայն Եվրամիության անդամ-երկրներում 83 միլիոն մարդ կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ հիվանդացել է այս տիպի հիվանդություններով, իսկ 50% ենթակա է այդ ռիսկին: Մասնագետների կանխատեսումների համաձայն՝ 2020թ-ին աշխարհում այս հիվանդությունը ծավալներով կլինի երկրորդ տեղում:

http://www.a1plus.am/amu/?page=issue&iid=40228